

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

1.2 (25)

Общественные и гуманитарные науки

(Правоведение, педагогика, социология, экономика и управление)

Humanities and Social Sciences

(Jurisprudence, Pedagogy, Sociology, Economics and Management)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2018

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ISSN 1829-4367

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1.2 (25)

Հասարակական և հումանիտար գիտություններ

(Իրավագիտություն, մանկավարժություն, սոցիոլոգիա,
տնտեսագիտություն և կառավարում)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2018

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

ք.գ.դ., պրոֆ. Ա. Աթանեսյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան
տ.գ.դ., պրոֆ. Ա. Առաքելյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան
ի.գ.թ., դոց. Տ. Սիմոնյան
ի.գ.թ., դոց. Ա. Վարդապետյան
մ.գ.թ., դոց. Վ. Գյուլբուդաղյան
մ.գ.թ., դոց. Թ. Հարությունյան
տ.գ.թ., դոց. Բ. Ասատրյան
մ.գ.թ., ասիս. Լ. Հայրապետյան
ի.գ.թ., ասիս. Տ. Սուլջյան
ի.գ.թ., ասիս. Ա. Թավադյան
ի.գ.թ., ասիս. Վ. Գրիգորյան
տ.գ.թ. Կ. Խաչատրյան

Editorial Board

DSc, Prof. A. Atanesyan
DSC, Prof. H. Sargsyan
DSC, Prof. A. Arakelyan
DSC, Prof. H. Mnatsakanyan
PhD, Associate Prof. T. Simonyan
PhD, Associate Prof. A. Vardapetyan
PhD, Associate Prof. V. Gyulbudaghyan
PhD, Associate Prof. T. Harutyunyan
PhD, Associate Prof. B. Asatryan
PhD, Assistant L. Hayrapetyan
PhD, Assistant T. Sujyan
PhD, Assistant A. Tavadyan
PhD, Assistant V. Grigoryan
PhD K. Khachatryan

Редакционная коллегия:

д.п.н., проф. А. Атанесян
д.э.н., проф. А. Саргсян
д.э.н., проф. А. Аракелян
д.э.н., проф. А. Мнацаканян
к.ю.н., доц. Т. Симонян
к.ю.н., доц. А. Вардапетян
к.п.н., доц. В. Гюльбудагян
к.п.н., доц. Т. Арутюнян
к.э.н., доц. Б. Асатрян
к.п.н., ассис. Л. Айрапетян
к.ю.н., ассис. Т. Суджян
к.ю.н., ассис. А. Тавадян
к.ю.н., ассис. В. Григорян
к.э.н. К. Хачатрян

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am

Հրատարակության նախապատրաստող ստորաբաժանում՝ ԵՊՀ ուսանողական գիտական
ընկերություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 60) 71 01 94,
Էլ. փոստ՝ sss@ysu.am
ԵՊՀ ՈՒԳԸ հրատարակումների կայք՝ www.ssspub.y-su.am.

Դադունց Տիգրան

ԵՊՀ, Իրավագիտության ֆակուլտետ, մագիստրանտ
Գիտական ղեկավար՝ ի. գ. դ., պրոֆ. Ա. Հայկյանց
Էլ. փոստ՝ tigran.dadunts@ysumail.am

**ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ԳՈՐԾԵՐՈՎ ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ (ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԸՆԴՀԱՏՈՒԹՅՈՒՆ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Քաղաքացիական դատավարությունում հայց հարուցելու իրավունքի իրացման առաջնային նախադրյալներից մեկն այն է, որ գործը, որը պետք է հարուցվի այդ հայցով, ընդդատյա լինի տվյալ դատարանին, որին ուղղված է հայցը, այսինքն այն հարցի լուծումը, թե արդյոք դատարանն իրավունք ունի և պարտավոր է արդյոք տվյալ գործը քննելու և վճիռ (որոշում) կայացնելու, այլ կերպ՝ ունի արդյոք դատարանը իրավասություն տվյալ գործով և ընդդատյա է արդյոք գործն այդ դատարանին: Միջազգային քաղաքացիական դատավարությունում, երբ խոսքը գնում է օտարերկրյա տարրի մասնակցությամբ քաղաքացիական գործերի հարուցման և քննության մասին, գործը քննելու դատարանի իրավասությունը որոշվում է, այսպես կոչված, միջազգային ընդդատության¹ կանոններով, այլ կերպ՝ թե արդյոք հենց տվյալ պետության դատարանն է իրավասու քննել և լուծել գործը, որին մասնակցում է օտարերկրյա տարրը: Այսինքն՝ միջազգային ընդդատություն ասելով հասկանում ենք այն, թե օտարերկրյա տարրով քաղաքացիաիրավական հարաբերությունը որ պետության դատարանի իրավասությանն է ենթակա [1]: Իսկ արդեն կոնկրետ պետության շրջանակներում գործող դատական համակարգի դատարանների իրավասությունը որոշվում է, այսպես կոչված, տեղական (տարածքային) ընդդատության կանոններով [2]:

Քանի որ գոյություն չունի մեկ միասնական փաստաթուղթ, իրավական ակտ (իրավական նորմերի համակարգ), որի հիման վրա հնարավոր կլիներ որոշել այս կամ այն պետության դատարանների իրավագործությունը որևէ գործով, ուստի յուրաքանչյուր ինքնիշխան պետություն ինքնուրույն է սահմանում իր դատարանների՝ օտարերկրյա տարրի մասնակցությամբ գործեր քննելու իրավասությունը և դրա սահմանները, այդ թվում՝ այդ գործերը իր վարույթ ընդունելու չափանիշներն ու հիմքերը:

¹ «Միջազգային ընդդատություն»-ը պայմանական եզրույթ է (տե՛ս **Ануфриева Л., Бекашев К., Дмитриева Г. и др.** Международное частное право: Учебник/Отв. ред. Г. Дмитриева. — 2-ое изд., перераб. и доп., Москва, ТК Велби, Изд-во Проспект, 2004, с. 591, **Шак Х.** Международное гражданское процессуальное право: Учебник, пер. с нем., М.: Издательство БЕК, 2001, с. 63), այն կիրառվում է միայն տեսական գրականությունում, իսկ տարբեր երկրների օրենսդրության մեջ հիմնականում կիրառվում են օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերով դատարանների իրավասություն, իրավագործություն, ընդդատություն հասկացությունները:

Ազգային օրենսդրության համար միջազգային ընդդատության նախապես որոշված կանոններ և կարգ սահմանված չեն: Այսինքն՝ միջազգային ընդդատության տեսանկյունից պետությունն ինքն է սահմանում՝ ունի արդյոք տվյալ պետության դատարանը իրավասություն որևէ կոնկրետ գործով, և հարցին պատասխանը տրվում է հենց այդ պետության օրենսդրության կամ նրա իրավական համակարգի մասը կազմող միջազգային պայմանագրերի հիման վրա [3]: Ավելին՝ յուրաքանչյուր պետություն, ելնելով միջազգային ընդդատությունը սահմանող իր ազգային կանոններից, իր վրա է վերցնում իրավական վեճերի այնպիսի շրջանակ, որն իր համար նպատակահարմար է համարում, և նման ազատությունը միջազգային իրավունքի ոչ մի նորմով չի սահմանափակվում [2]:

Երբ խոսքը գնում է Հայաստանի Հանրապետության դատարաններին ընդդատյա՝ օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերի մասին, ապա պետք է նկատի ունենալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի [4] (այսուհետ նաև՝ ՔԴՕ) 244-րդ հոդվածը, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության դատարանների իրավասությունն օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերով:

Քննարկենք ՔԴՕ 244-րդ հոդվածով նախատեսված՝ միջազգային ընդդատության մի քանի կանոններ:

Նախ ՔԴՕ 244-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Հայաստանի Հանրապետության դատարաններն օտարերկրյա անձանց մասնակցությամբ քաղաքացիական գործերը քննում են, եթե պատասխանողն ունի բնակության վայր կամ գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում»: Այս նորմով սահմանված է միջազգային ընդդատության տեսակներից՝ ընդհանուր ընդդատությունը՝ հայցվորը դիմում է պատասխանողի բնակության (գտնվելու) վայրի դատարան (Actor sequitur forum rei) [2]: Նախ և առաջ հնարավոր անհստակությունը վերացնելու և ճիշտ տերմինաբանություն կիրառելու տեսանկյունից, վերոնշյալ հոդվածի 1-ին մասում, կարծում ենք, անհրաժեշտ է հստակ տարանջատել «պատասխանող ֆիզիկական անձի բնակության վայր» և «պատասխանող իրավաբանական անձի գտնվելու վայր» հասկացությունները: Նման հստակ տարբերակումն ինքնանպատակ չէ, այլապես թյուր կարծիք կարող է ստեղծվել առ այն, որ եթե պատասխանող ֆիզիկական անձը «գտնվում է» Հայաստանի Հանրապետության տարածքում, ապա նրա դեմ նույնպես կարելի է հայց հարուցել ՀՀ դատարաններ՝ նրա՝ հայցի հարուցման պահին ՀՀ տարածքում փաստացի գտնվելու հիմքով, անկախ նրանից՝ բնակության վայր ունի, թե ոչ: Ընդդատության որոշման վերոնշյալ սկզբունքը կիրառելի է անգլոսաքսոնական համակարգում (հայց հարուցելիս հաշվի է առնվում պատասխանողին ծանուցելիս այդ երկրում փաստացի գտնվելը²), ինչը խորթ և անընդունելի է մեր իրավական համակարգի համար

² Ավելին տե՛ս **Հայկյանց Ա.**, Միջազգային մասնավոր իրավունք: Դասագիրք: 2-րդ հրատարակություն (լրացումներով և փոփոխություններով), Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջ 518, **Ануфриева Л.** Международное частное право: В 3-х т. Том 3. Трансграничные банкротства.

(նույնիսկ ամերիկյան դատական ատյաններում բարձրացվել է այդ սկզբունքի հակասահմանադրականության հարցը [5]): Ինչևէ, նման հնարավոր թյուրըմբռնումներից խուսափելու համար ճիշտ կլիներ ՔԴՕ 244-րդ հոդվածի 1-ին մասում նշել՝ «Հայաստանի Հանրապետության դատարաններն օտարերկրյա անձանց մասնակցությամբ քաղաքացիական գործերը քննում են, եթե պատասխանող ֆիզիկական անձը Հայաստանի Հանրապետության տարածքում ունի բնակության վայր կամ պատասխանող իրավաբանական անձի գտնվելու վայրը Հայաստանի Հանրապետության տարածքում է»³:

Որոշ խնդիրներ կարող են առաջանալ պատասխանողի «բնակության վայր» և «գտնվելու վայր» հասկացությունների մեկնաբանման հարցում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի [6] (այսուհետ՝ Քաղաքացիական օրենսգիրք) 23-րդ հոդվածի համաձայն՝ «Բնակության վայր է համարվում այն վայրը, որտեղ քաղաքացին մշտապես կամ առավելապես ապրում է»: Քաղաքացիական օրենսգիրքը չի մանրամասնում, թե որոնք են «մշտապես» և «առավելապես» կատեգորիաների չափանիշները: Գրականության մեջ նշվում է, որ մշտական բնակությունը ոչ միշտ է ենթադրում երկարատև բնակություն: Կարևորն այն է, որ ստեղծված պայմաններում անձը հաստատվի, հիմնավորվի, այսպես ասած՝ տնավորվի նշված վայրում [7]: Իսկ առավելապես բնակվելու չափանիշը էական նշանակություն ունի այն դեպքերում, երբ անձի գործունեությունը կապված չի լինում որևէ կոնկրետ վայրի հետ, և անձը ստիպված է լինում մշտապես մեկ վայրից մյուսը տեղափոխվել և գործունեություն ծավալել: Նման դեպքերում բնակության վայր պետք է ճանաչվի այն վայրը, որտեղ անձը ապրում է առավելապես, այսինքն՝ առավել երկար, քան մյուս վայրերում [7]:

Անձի բնակության վայրը պետք է տարբերել անձի կեցության վայրից: Վերջինս անձի ժամանակավոր բնակության վայրն է, որը, կախված կոնկրետ հանգամանքներից, կարող է տարբեր լինել, օրինակ՝ հյուրանոցը, հիվանդանոցը, ազատազրկման դատապարտված անձանց դեպքում (օտարերկրացիների, որոնք պատիժը կրում են այլ երկրում)՝ ազատազրկման վայրը, ուսման կարճաժամկետ ծրագրերով այլ երկրից ժամանած ուսանողների կացարանները: Այս դեպքերում, կարծում ենք, նշված վայրերը չեն կարող համարվել վերջիններիս բնակության վայրեր և հիմք հանդիսանալ նրանց մասնակցությամբ գործերով միջազգային ընդդատությունը որոշելու համար: Նշված կատեգորիայի անձանց բնակության վայրը պետք է դիտվի այն վայրը, որտեղ մշտապես բնակվել են նախկինում, իսկ վերոնշյալ վայրերը կհամարվեն ժամանակավոր կացության վայր: Խոսքը, իհարկե, չի վերաբերում այն օտարերկրացիներին,

Международный коммерческий арбитраж. Международный гражданский процесс: Учебник, Москва, Издательство БЕК, 2001, § 2, с. 301.

³ Վերոնշյալ խնդիրը շտկվել է 26.09.2017 թ. դրությամբ շրջանառության մեջ դրված՝ «Քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի նախագծի» 386-րդ հոդվածում (<http://moj.am/legal/drafts>):

որոնք, համաձայն «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի [8], ստացել են կացութային կարգավիճակ և հաշվառված են բնակչության պետական ռեգիստրում և ՀՀ-ում ունեն բնակչության գրանցված վայր:

Գտնում ենք, որ, ընդհանուր առմամբ, ֆիզիկական անձի բնակչության վայրը պետք է լինի նրա կենսական շահերի կենտրոնը, անձը այդ վայրի հետ պետք է կապված լինի և՛ անձնական, և՛ գործնական ամուր կապերով: Մասնավորապես, եթե օտարերկրացին գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով⁴, չի ստացել կացության կարգավիճակ և չի հաշվառվել բնակչության պետական ռեգիստրում, գտնվում է, օրինակ, արշավախմբի կամ հետազոտություն կատարող խմբի շրջանակներում, բուժման, կարճատև գործուղման մեջ, մասնակցում է կարճատև դասընթացների և կրթական ծրագրերի (և այդ հիմքով էլ չի ստացել կացության կարգավիճակ) կամ նույնիսկ կացության կարգավիճակ ստանալու դեպքում՝ դեռևս չի հաշվառվել բնակչության պետական ռեգիստրում և չունի գրանցված բնակչության վայր, նա ՀՀ դատարաններում չի կարող ներգրավվել որպես պատասխանող:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ ընդհանուր միջազգային ընդդատության իմաստով պատասխանողի բնակչության վայր հասկացությունը պետք է մեկնաբանվի «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի, «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի [9] և այդ օրենքի հիման վրա ընդունված՝ «Հայաստանի Հանրապետությունում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին» ՀՀ կառավարության 14 հուլիսի 2005 թվականի թիվ 1231-Ն որոշման [10] դրույթների հիման վրա՝ վերոնշյալ կանոնների և մեկնաբանությունների լույսի ներքո:

Անդրադառնալով իրավաբանական անձի գտնվելու վայր հասկացությանը, հարկ է նշել, որ, համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 59-րդ հոդվածի՝ «Իրավաբանական անձի գտնվելու վայրը նրա մշտական գործող մարմնի գտնվելու վայրն է»:
ՀՀ վճռաբեկ դատարանը իրավաբանական անձանց իրենց գտնվելու վայրի հասցեով ծանուցման հարցին անդրադառնալիս որոշակիորեն անդրադարձել է իրավաբանական անձի գտնվելու վայր հասկացությանը: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ կետի, 56-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծության հիման վրա եկել է այն եզրահանգման, որ իրավաբանական անձի գտնվելու վայր է համարվում իրավաբանական անձի կանոնադրությամբ նշված և պետական գրանցման համար որպես պարտադիր տվյալ ներկայացված նրա մշտական գործող մարմնի հասցեն [11]: Հետևաբար, պարզելու համար, թե արդյոք իրավաբանական անձն գտնվելու վայր ՀՀ տարածքում, անհրաժեշտ է հիմք ընդունել տվյալ իրավաբանական անձի կանոնադրությամբ նշված հասցեն, որը

⁴ Համաձայն «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի՝ ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու հիմքերից մեկը նվազագույնը մեկ տարի Հայաստանում բնակվելը հիմնավորող հանգամանքն է:

հաշվառված է իրավաբանական անձի պետական գրանցում իրականացնող մարմնում՝ որպես տվյալ իրավաբանական անձի մշտական գործող մարմնի հասցե:

Օտարերկրյա իրավաբանական անձանց մասնակցությամբ գործերով միջազգային ընդդատությունը որոշելու կանոններից է նաև ընդդատության որոշումն ըստ օտարերկրյա անձի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող մասնաճյուղի կամ ներկայացուցչության: Այսինքն՝ եթե օտարերկրյա իրավաբանական անձը ՀՀ տարածքում ունի մասնաճյուղ կամ ներկայացուցչություն, ապա այդ իրավաբանական անձի մասնակցությամբ գործերը նույնպես կարող են քննվել ՀՀ դատարաններում, ընդ որում, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքից [12] հետևում է, որ օտարերկրյա իրավաբանական անձանց մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները պետք է օրենքով սահմանված կարգով հաշվառված լինեն: Բացի այդ, նշված օրենքի իմաստով հաշվառման ենթակա են իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումները, այսինքն՝ օրենքը կիրառում է «առանձնացված ստորաբաժանումներ» ընդհանրական կատեգորիան, չսահմանափակվելով «մասնաճյուղ» և «ներկայացուցչություն» հասկացություններով: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ գտնում ենք, որ ՔԴՕ 244-րդ հոդվածում նույնպես կարելի է սահմանել օտարերկրյա իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումներ ընդհանրական կատեգորիան՝ ներառելով նաև մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները, քանի որ օտարերկրյա իրավաբանական անձինք կարող են ունենալ ստորաբաժանումներ տարբեր անվանումներով՝ գրասենյակ, բաժան-մունք, բաժին, գործակալություն և այլն, իսկ ընդհանրական կատեգորիայի դեպքում բոլոր ստորաբաժանումները, անկախ իրենց անվանումից, կընդգրկվեն դրա տակ և հիմք կհանդիսանան դրանց՝ ՀՀ տարածքում գտնվելու հիմքով ՀՀ դատարանների իրավասությունը որոշելու համար: Բացի այդ, օտարերկրյա իրավաբանական անձը ՀՀ տարածքում կարող է գործունեություն իրականացնել ոչ միայն իր առանձնացված ստորաբաժանումների, այլ նաև գործակալության, հանձնարարության և այլ գործարքների հիման վրա հանդես եկող լիազոր ներկայացուցիչների միջոցով՝ լիազորելով այս կամ այն անձին կամ ընկերությանը՝ հանդես գալու իր անունից և ՀՀ տարածքում իր համար ձեռք բերելու իրավունքներ և պարտականություններ: Սա ներկայացուցչության առանձնահատուկ տեսակ է, և եթե ՀՀ տարածքում մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ունենալը որպես ընդդատությունը որոշելու հիմք դիտարկելու տրամաբանությունն այն է, որ դրանով որոշվում է այդ ընկերության և ՀՀ միջև կապը, ապա գործակալների և լիազոր ներկայացուցիչների միջոցով ՀՀ տարածքում իրավահարաբերություններին մասնակցելու և հետագայում հնարավոր վեճերի մեջ ներգրավելու դեպքում, որպես նման կապի առկայության հանգամանք, կարելի է դիտարկել ՀՀ տարածքում լիազոր ներկայացուցիչ ունենալը և նրանց միջոցով իրավահարաբերություններին մասնակցելը, ինչպես դա կաներ անձը իր մասնաճյուղի

կամ ներկայացուցչության միջոցով: Ուստի ճիշտ կլիներ ՀՀ դատարաններին հնարավորություն տալ քննելու նաև օտարերկրյա անձանց մասնակցությամբ այն գործերը, որոնք բխում են այն իրավահարաբերություններից, որոնց օտարերկրյա իրավաբանական անձը մասնակցել է ՀՀ տարածքում գտնվող իրավաբանական անձանց կամ ՀՀ տարածքում բնակության վայր ունեցող անձանց հետ կնքված գործակալության, հանձնարարության և այլ գործարքների միջոցով: Այսինքն՝ ՔԴՕ 244-րդ հոդվածի երկրորդ մասը կարելի է լրացնել հետևյալ կետով՝ «Հայաստանի Հանրապետության դատարաններն իրավունք ունեն նաև քննել օտարերկրյա անձանց մասնակցությամբ քաղաքացիական գործեր, եթե հայցը բխում է այնպիսի իրավահարաբերություններից, որոնց որպես օտարերկրյա իրավաբանական անձի ներկայացուցիչ նրա անունից հանդես է եկել ՀՀ տարածքում գտնվող իրավաբանական անձը կամ ՀՀ տարածքում բնակության վայր ունեցող անձը՝ գործակալության, հանձնարարության պայմանագրերի և այլ գործարքների հիման վրա»:

Հարկ է քննարկել օտարերկրյա իրավաբանական անձանց մասնակցությամբ գործերի ընդդատությունը որոշելու հարցը նաև վերջերս Քաղաքացիական օրենսգրքում կատարված նորամուծության՝ իրավաբանական անձանց ռեդոմիցիլիացման շրջանակներում: Իրավաբանական անձի ռեդոմիցիլացումը իրավաբանական անձի տեղափոխումն է մեկ իրավազորությունից (jurisdiction) մեկ այլ իրավազորության ներքո, որի հետևանքով փոխվում է իրավաբանական անձի անձնական օրենքը [13]: Այսինքն՝ իրավաբանական անձի ռեդոմիցիլացման արդյունքում վերջինիս գտնվելու վայրը մեկ երկրից տեղափոխվում է մեկ այլ երկիր, տվյալ դեպքում՝ Հայաստանի Հանրապետություն:

Քաղաքացիական օրենսգրքի 59.2-րդ հոդվածն օտարերկրյա իրավաբանական անձին հնարավորություն է ընձեռում ռեդոմիցիլացվել ՀՀ-ում: Օտարերկրյա իրավաբանական անձի՝ ՀՀ-ում ռեդոմիցիլացման համար այդ օտարերկրյա իրավաբանական անձը նախնական գրանցման դիմում է ներկայացնում կառավարության լիազոր անձին կամ լիազոր մարմին, իսկ գրանցումն իրականացնող մարմինն իրականացնում է ռեդոմիցիլացվող իրավաբանական անձի նախնական գրանցում:

Նախնական գրանցմանը որոշակի ընթացակարգերից հետո հետևում է օտարերկրյա իրավաբանական անձի՝ ՀՀ-ում ռեդոմիցիլացման գրանցումը (եթե չկան գրանցումը մերժելու հիմքեր), որից հետո նոր տեղի է ունենում իրավաբանական անձի վերջնական ռեդոմիցիլացումը: Այսինքն՝ նախնական գրանցումից մինչև ռեդոմիցիլացման գրանցումն ընկած միջանկյալ ժամանակահատվածում օտարերկրյա իրավաբանական անձը, որը պատրաստ է ընդունելու Հայաստանի Հանրապետության, այդ թվում՝ վերջինիս դատարանների իրավազորությունը, կարող է դառնալ քաղաքացիաիրավական հարաբերությունների և դրանցից բխող քաղաքացիաիրավական վեճերի մասնակից, իսկ նման կարգավիճակում գտնվող իրավաբանական անձանց մասնակցությամբ գործերի քննությունը ՀՀ դատարանների իրավասության ներքո ընդգրկելը, կարծում ենք, արդարացված քայլ կլինի: Օրինակ, եթե դեռևս չռեդոմիցիլացված իրա-

վաբանական անձը ռեդումիցիլացման նախնական գրանցում ստանալուց հետո ՀՀ-ում բնակվող ֆիզիկական անձանց կամ ՀՀ-ում գտնվող իրավաբանական անձանց հետ քաղաքացիաիրավական վեճի մեջ հայտնվի, ապա այդ իրավաբանական անձի դեմ ՀՀ դատարանում ընդատության ընդհանուր կանոնով հայց չի կարող հարուցվել (եթե օրինակ առկա չլինեն միջազգային ընդատության մյուս տեսակները), հայցը կհարուցվի այդ իրավաբանական անձի գտնվելու վայրի դատարանում, իսկ ռեդումիցիլացումից հետո այդ դատարանը, ամենայն հավանականությամբ, կշարունակի քննել վերջինիս մասնակցությամբ գործը, իսկ գործին մասնակցող՝ ՀՀ-ում բնակվող քաղաքացիները և ՀՀ իրավաբանական անձինք, ստիպված լինեին գործի քննությանը մասնակցել իրավաբանական անձի նախկին գտնվելու վայրի դատարանում: Դեռ չենք խոսում այն դեպքերի մասին, երբ նախնական գրանցումից հետո, մինչև իրավաբանական անձի ռեդումիցիլացման վերջնական գրանցումը, անձը գրանցումից հանված լինի օտարերկրյա պետությունում. այդ դեպքում օտարերկրյա պետության դատարանները, ամենայն հավանականությամբ, ընդհանրապես չեն քննի տվյալ իրավաբանական անձի մասնակցությամբ գործը իրենց դատարանին ընդատյալ չլինելու հիմքով:

Ուստի նման դեպքերը կանխելու համար ճիշտ կլինի ՔԴՕ-ում ամրագրել, որ օտարերկրյա իրավաբանական անձանց ռեդումիցիլացման դեպքում նախնական գրանցումից մինչև վերջնական գրանցումն ընկած միջանկյալ ժամանակահատվածում նման իրավաբանական անձանց վրա ևս տարածվի ՀՀ դատարանների իրավազորությունը, իսկ օրենքով սահմանված կարգով ռեդումիցիլացման գրանցումը մերժելու դեպքում, ՀՀ դատարանները կշարունակեն նման իրավաբանական անձանց մասնակցությամբ գործերի քննությունը ՔԴՕ 244-րդ հոդվածի երրորդ մասի ուժով⁵:

Այսպիսով՝ ՔԴՕ 244-րդ հոդվածը կարելի է լրացնել հետևյալ ենթակետով՝ «Հայաստանի Հանրապետության դատարաններն իրավունք ունեն նաև քննել օտարերկրյա անձանց մասնակցությամբ քաղաքացիական գործեր, եթե Հայաստանի Հանրապետությունում ռեդումիցիլացվող օտարերկրյա իրավաբանական անձը ՀՀ-ում ստացել է նախնական գրանցում»:

ՔԴՕ 244-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ՀՀ դատարաններն իրավունք ունեն նաև քննել օտարերկրյա անձանց մասնակցությամբ քաղաքացիական գործեր, եթե պատասխանողը Հայաստանի Հանրապետության տարածքում ունի գույք:

Վերոնշյալ նորմի պայմաններում տեսականորեն կարող են առաջանալ օտարերկրյա անձանց մասնակցությամբ ՀՀ դատարանների իրավասությունը որոշելու հետևյալ հնարավոր դեպքերը.

⁵ Նշված նորմը սահմանում է, որ «Սույն հոդվածով նախատեսված կանոնների պահպանմամբ՝ դատարանի կողմից քննության ընդունված գործը լուծում է դատարանն ըստ էության, թեկուզև վարույթի ընթացքում գործին մասնակցող անձանց գտնվելու վայրը փոխելու կապակցությամբ կամ այլ հանգամանքներով այն ընդատյալ է դարձել այլ պետության դատարանին»:

- Գույքային վեճեր, երբ այդ վեճի շրջանակներում պահանջը կապված է տվյալ գույքի հետ (վեճի առարկան հենց այդ գույքն է),
- Գույքային վեճեր, երբ պահանջը տվյալ գույքի հետ կապված չէ,
- Ոչ գույքային վեճեր:

Նախ շատ ձևական և անհեթեթ է հնչում, երբ ոչ գույքային վեճերով ՀՀ դատարանը կարող է իրավասու լինել Հայաստանում՝ պատասխանողի գույքի առկայության հիմքով [14]: Այս առումով, օրինակ, գերմանական իրավունքը պատասխանողի գույքի գտնվելու վայրով որոշվող ընդդատությունը սահմանելիս նշում է միմիայն գույքային վեճերով նման ընդդատությունը որոշելու հնարավորությունը [2]: Այսինքն՝ այն հանգամանքը, որ պատասխանողն ունի գույք որևէ պետության տարածքում, կարող է հիմք հանդիսանալ այդ պետության իրավասությունը տարածելու համար միայն գույքային վեճ քննելու դեպքում: ՔԴՕ վերոնշյալ նորմը շատ ընդհանուր է ձևակերպված՝ «իրավունք ունեն նաև քննել...գործեր, եթե (...) պատասխանողը Հայաստանի Հանրապետության տարածքում ունի գույք»: «Գործեր» կատեգորիան հստակ սահմանված չլինելու դեպքում կարող է լայն մեկնաբանության ենթարկվել՝ ընդգրկելով նաև ոչ գույքային վեճերը, ինչն այս դեպքում անընդունելի կլիներ: Ընդդատության այս կամ այն տեսակը սահմանելն ինքնանպատակ չէ. դրա հիմքում որոշակի կապ է դրված ընդդատության այդ տեսակի և դատարանի վայրի երկրի միջև [15]: Իսկ պատասխանողի՝ գույք ունենալու հանգամանքը կարող է սերտ կապի մասին վկայել միայն գույքային վեճերի դեպքում, գույքի գտնվելու վայրի հետ գործը քննող դատարանի իրավասությունը պետք է կապվի միայն գույքային վեճերի վերաբերյալ գործերով, քանի որ տրամաբանությունն այստեղ այն է, որ այդ գույքի վրա հետագայում հայցի ապահովում կկիրառվի, վճռի հիման վրա բռնագանձում կտարածվի և կիրականացվեն կատարողական այլ գործողություններ: Այսինքն՝ ընդդատության այս տեսակի էությունը գույքային վեճերով կայացված վճռի հետագա կատարումն ապահովելն ու միաժամանակ պատասխանողի՝ տվյալ երկրի հետ կապը ցույց տալն է: Այդ պատճառով էլ, անկախ հայցվորի և պատասխանողի բնակության և գտնվելու վայրից կամ այլ հանգամանքներից, օրենքը սահմանում է ընդդատության այդ տեսակը:

Շեղանկաբերական է ՀՀ դատական պրակտիկան այս հարցի վերաբերյալ. այսպես, մի գործով [16] հայցվորը դիմել է դատարան՝ պատասխանողի՝ ապրանքային նշանի օգտագործումն արգելելու պահանջով (ոչ գույքային պահանջ): Պատասխանողի գտնվելու վայրը ԱՄՆ-ում է, և այն հանդիսանում է օտարերկրյա իրավաբանական անձ: Հայցվորի կողմից, որպես ներկայացված հայցապահանջը ՀՀ դատարանում քննելու հիմնավորում, ներկայացվել է ՀՀ տարածքում պատասխանողի գույք ունենալու հանգամանքը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 244-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն, և որպես գույք նշվել է օտարերկրյա իրավաբանական անձի ապրանքային նշանի առկայությունը ՀՀ-ում, իսկ որպես իրավական հիմնավորում հղում է կատարվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ և 140-րդ հոդվածներին:

Դատարանը վերադարձրել է հայցադիմումը՝ գործը դատարանին ընդդատյա չլինելու հիմքով, քննարկելով և հիմնավորելով այն հարցը, որ ապրանքային նշանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերլուծությունից ելնելով չի կարող համարել գույք, դրանից չպետք է ենթադրել, որ պատասխանողը ՀՀ տարածքում գույք ունի:

Դատարանը, փաստորեն, ընդհանրապես քննության չի առել այն հարցը, որ որպես ոչ գույքային պահանջով գործը ՀՀ դատարանում քննելու հիմնավորում, հայցվորը ներկայացնում է պատասխանողի՝ ՀՀ տարածքում գույք ունենալու հանգամանքը: Այսինքն թվում է, որ եթե պատասխանողը հայցադիմումում հիմնավորեր, որ հայցվորը ՀՀ տարածքում ունի գույք՝ սեփականության կամ այլ իրավունքով պատկանող, այլ ոչ թե ապրանքային նշան, ինչպես տվյալ գործում, դատարանը հայցադիմումը կարող էր ընդունել վարույթ (այլ պայմանների առկայության դեպքում):

Իհարկե դատարաններն այս հարցում առաջնորդվում են օրենքի տառացի մեկնաբանությամբ, քանի որ սա օրենքի բացն է, որն ընդդատության այս տեսակը սահմանելիս որևէ սահմանազատում չի դրել գույքային և ոչ գույքային վեճերի միջև, չնայած, ինչպես նշվեց վերևում, բոլոր հիմնավորումները կան պնդելու, որ պատասխանողի գույք ունենալու հիմքով ընդդատությունը կարող է որոշվել միայն գույքային վեճերով:

Հաջորդ հարցը, որ ծագում է, այն է, թե արդյոք պատասխանողի՝ ՀՀ տարածքում գույք ունենալը հիմք է բոլոր գույքային վեճերը քննելու համար, նույնիսկ եթե հայցվորի պահանջը տվյալ գույքի հետ կապված չէ, և արդյոք ցանկացած գույք ունենալը հիմք է ընդդատության այս տեսակը որոշելու համար:

Ամերիկյան իրավունքում, օրինակ, դատարանների կողմից սկզբնական շրջանում կիրառվում էր quasi in-rem jurisdiction կանոնը, որը դիտարկվում է որպես in personam իրավազորության (կողմերի բնակության և գտնվելու վայրով որոշվող ընդդատության) և in rem իրավազորության (գույքի գտնվելու վայրով որոշվող ընդդատության) խառնուրդ [17]: Ամերիկյան դատարանները (մասնավորապես՝ նահանգի դատարանները) quasi in-rem jurisdiction-ը կիրառելով՝ քննում էին ոչ ռեզիդենտ անձի դեմ վեճեր, որն ունի գույք տվյալ նահանգում, նույնիսկ եթե այդ վեճերը կապված չէին այդ գույքի հետ: Սակայն հետագայում ԱՄՆ Գերագույն դատարանը նշեց, որ միայն գույքի առկայությունը բավարար չէ այդ գույքի հետ չկապված վեճերը քննելու համար, քանի որ գործը, բացի ամեն ինչից, պետք է նվազագույն սերտ կապեր ունենա այդ գործը քննող դատարանի վայրի հետ: Կոնկրետ նահանգում գրանցված ընկերությունում միայն բաժնետոմս ունենալը չի կարող հիմք հանդիսանալ այդ անձին այդ նահանգի դատարանում քննվող գործում որպես պատասխանող ներգրավելու համար [18]:

Գերմանական իրավունքում գույքի առկայության հետ կապված ընդդատությունը բավականին բացարձականացված է: Ցանկացած գույքի առկայությունը հիմք կարող է հանդիսանալ այդ գույքի գտնվելու վայրի դատարանի իրավասությունը որոշելու

համար, «նույնիսկ այլ երկրի հյուրանոցում մոռացված անձրևանոցը կարող է պատասխանողին կանգնեցնել այդ երկրի դատարանի առջև» [2]:

Կարծում ենք և՛ ամերիկյան, և՛ գերմանական մոտեցումներն այս հարցում ծայրահեղություններ են. արդյունավետ լուծում չէր լինի պատասխանողի՝ դատարանի վայրի երկրում գույք ունենալը որպես հիմք դիտարկել միայն այդ գույքի հետ կապված վեճերով դատարանի իրավասությունը որոշելու համար, երբ այլ գույքային վեճերով հայցվորի օգտին վճիռ կայացնելու դեպքում այն կարող է կատարվել այդ գույքի հաշվին, և նաև չպետք է բացարձականացնել այս սկզբունքը գերմանական օրինակով և հնարավորություն տալ ցանկացած տեսակի ու արժեքի գույք ունենալու հանգամանքի ուժով պատասխանողի դեմ հայց հարուցել օտարերկրյա դատարանում, որը, ինչպես նշվեց, կարող է անհետաձգել արակտիկայի հիմք հանդիսանալ (անձրևանոցի օրինակով):

Ուստի գտնում ենք, որ այս հարցի ճիշտ լուծումը կարող է լինել «ոսկե միջինը», այն է՝ սահմանափակել ընդդատության այս տեսակը, սահմանել կառուցակարգ, ըստ որի՝ պատասխանողի գույքը պետք է համապատասխանի որոշակի չափանիշների, որպեսզի հիմք հանդիսանա ընդդատության այս տեսակի համար, օրինակ՝ պատասխանողի գույքի արժեքը պետք է ակնհայտորեն նվազ չլինի հայցապահանջի չափից⁶: Այս առումով Ավստրիայի «Քաղաքացիական գործերով ընդհանուր իրավասության դատարանների իրավասությունների և ընդդատության մասին» օրենքի [19] 99-րդ հոդվածը սահմանում է, որ «գույքի արժեքը, այնուամենայնիվ, չի կարող անհամաչափորեն նվազ լինել հայցապահանջի չափից»: Իսկ որպես անհամաչափորեն նվազ արժեք դիտարկվում է այն արժեքը, որը չի գերազանցում հայցագնի 20 տոկոսը [2]: Միաժամանակ կարելի է հայցվորի վրա դնել պարտականություն՝ հայցադիմումում հիմնավորելու պատասխանողի գույքի առկայությունը, դրա արժեքը և այն հանգամանքը, որ վճիռը հետագայում կարող է կատարվել այդ գույքի վրա բռնագանձում տարածելու հաշվին, այսինքն՝ հայցվորը ցույց տա գույքի և վեճի միջև անհրաժեշտ և բավարար կապը՝ ընդդատությունը որոշելու համար: Իհարկե այս կանոնից պետք է սահմանազատել այն դեպքերը, երբ հայցվորի պահանջը կապված է կոնկրետ այդ գույքի հետ, որի դեպքում արդեն գույքի տեսակը կամ արժեքը որևէ նշանակություն ունենալ չեն կարող:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՔԴՕ 244-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. «(...) գույքային վեճերով՝ վեճի առարկա հանդիսացող գույքը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում կամ պատասխանողը Հայաստանի Հանրապետության տարածքում ունի գույք, որի արժեքը

⁶ Օրինակ բանկային հաշվին 5000 դրամ ունենալը կամ պահառության սենյակում թողնված արծաթե ցածրարժեք շղթան՝ 500.000 դրամ գումարի բռնագանձման պահանջի դեպքում:

առերևույթ և անհամաչափորեն նվազ չէ հայցապահանջի չափից, և հայցվորը հայցադիմումում հիմնավորում է, որ վճիռը հետագայում կարող է կատարվել այդ գույքի վրա բռնագանձում տարածելու միջոցով»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] **Հայկյանց Ա.**, Միջազգային մասնավոր իրավունք, դասագիրք, 2-րդ հրատարակություն (լրացումներով և փոփոխություններով), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013, էջ 517:
- [2] **Шак Х.**, Международное гражданское процессуальное право: Учебник, пер. с нем. Москва, Издательство БЕК, 2001, сс. 88-156.
- [3] **Лунц Л., Марышева Н.**, Курс международного частного права: в 3 т., Москва, Юрид. лит, 2002, том. 3, Международный гражданский процесс, с. 810.
- [4] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք. ընդունվել է 17.06.1998 թ., ուժի մեջ է մտել 01.01.1999 թ. (URL: www.arlis.am):
- [5] ԱՄՆ Գերագույն դատարանի որոշում Burnham v. Superior Court գործով, 495 U.S. 604 (1990) (URL: <https://supreme.justia.com/cases/federal/us/495/604/case.html>):
- [6] ՀՀ քաղաքացիական օրենսգիրք. ընդունվել է 05.05.1998 թ., ուժի մեջ է մտել 01.01.1999 թ. (www.arlis.am):
- [7] **Суханов Е.**, Гражданское право. В 4 т. Т. 1: Общая часть: 3-е изд., перераб и доп., Москва, Волтерс Клувер, 2006, с. 194.
- [8] «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենք. ընդունվել է 25.12.2006 թ., ուժի մեջ է մտել 03.02.2007 թ. (URL: www.arlis.am):
- [9] «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենք. ընդունվել է 24.09.2002 թ., ուժի մեջ է մտել 31.10.2002 թ. (URL: www.arlis.am):
- [10] «Հայաստանի Հանրապետությունում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին» ՀՀ կառավարության 14 հուլիսի 2005 թվականի թիվ 1231-Ն որոշում. ընդունվել է 14.07.2005 թ., ուժի մեջ է մտել 17.09.2005 թ. (URL: www.arlis.am):
- [11] ԵԱԲԴ/1424/02/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 01.10.2010 թ. որոշում (URL: www.arlis.am):
- [12] Ընդունվել է 03.04.2001 թ., ուժի մեջ է մտել 18.08.2001 թ. (URL: www.arlis.am):
- [13] Քաղաքացիական օրենսգրքի հոդված 59.1:
- [14] **Հայկյանց Ա.**, Հայաստանի օրենսդրությամբ քաղաքացիական գործերով միջազգային ընդդատության որոշ հարցեր, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ, գլխ. խմբ.՝ Ղազինյան Գ. Ս., Երևան, ԵՊՀ, 2016, էջ 142:
- [15] **Нешатаева Т.**, Международное частное право и международный гражданский процесс, Учебный курс в 3-х частях, Москва, Городец, 2004, с. 459.

[16] ԵՇԴ/1281/02/13 քաղաքացիական գործով Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի՝ հայցադիմումը վերադարձնելու մասին 14.10.2013 թ. որոշում (URL: www.armlaw.am):

[17] **Symeonides S.**, American Private International Law, Austin: Kluwer, 2008, p. 29.

[18] ԱՄՆ Գերագույն դատարանի որոշում Shaffer v. Heitner գործով, 433 U.S. 186 (1977) URL: <https://supreme.justia.com/cases/federal/us/433/186/case.html>:

[19] Ավստրիայի «Քաղաքացիական գործերով ընդհանուր իրավասության դատարանների իրավասությունների և ընդդատության մասին» օրենք,
URL: <http://www.wipo.int/wipolex/ru/details.jsp?id=9750> (2011 թ. խմբագրություն, փոփոխվել է Դաշնային օրենքով (BGBl) թիվ 111/2010)):

Դադունց Տիգրան

**ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ԳՈՐԾԵՐՈՎ ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ (ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Քանալի բառեր՝ միջազգային մասնավոր իրավունք, միջազգային քաղաքացիական դատավարություն, միջազգային ընդդատություն, ՀՀ դատարանների իրավասությունը օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերով, միջազգային ընդհանուր ընդդատություն, միջազգային ընդդատությունն ըստ իրավաբանական անձի մասնաճյուղի կամ ներկայացուցչության գտնվելու վայրի, ռեզոմիցիլացում, միջազգային ընդդատությունն ըստ գույքի գտնվելու վայրի:

Միջազգային մասնավոր հարաբերությունների իրավական կարգավորման ոլորտում բացառիկ կարևոր դեր է խաղում միջազգային ընդդատություն ինստիտուտը՝ օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերով այս կամ այն պետության դատարանի իրավասությունը: Հողվածում վերլուծության է ենթարկվում վերոնշյալ ինստիտուտի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը՝ արտասահմանյան երկրների օրենսդրության, միջազգային իրավական աղբյուրների և տեսական գրականության համատեքստում, և արդյունքում վեր են հանվում մի շարք հիմնահարցեր և ներկայացվում են դրանց լուծմանն ուղղված առաջարկներ: Մասնավորապես, միջազգային ընդդատության համատեքստում քննարկվել են ֆիզիկական անձանց բնակության վայրի և իրավաբանական անձանց գտնվելու վայրի հասկացությունները, անդրադարձ է կատարվել ըստ օտարերկրյա անձի մասնաճյուղի կամ ներկայացուցչության գտնվելու վայրի միջազգային ընդդատությունը որոշելու հարցերին, ռեզոմիցիլացման ինստիտուտի և միջազգային ընդդատության հարաբերակցությանը, գույքի գտնվելու վայրի հիմքով ՀՀ դատարանների միջազգային ընդդատությունը որոշելու հարցերին և կատարված վերլուծությունների արդյունքում արվել են օրենսդրական փոփոխությունների կոնկրետ առաջարկներ:

Բարձրագլխի իրավական խնդիրների արդյունավետ լուծումն իր ազդեցությունը կունենա ՀՀ-ում քննարկվող ինստիտուտի կատարելագործման և որպես արդյունք՝ միջազգային մասնավոր հարաբերությունների զարգացման վրա:

Дадунц Тигран

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ КОМПЕТЕНЦИИ СУДОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ ПО ДЕЛАМ С УЧАСТИЕМ ИНОСТРАННЫХ ЛИЦ (МЕЖДУНАРОДНОЙ ПОДСУДНОСТИ)

Ключевые слова: международное частное право, международный гражданский процесс, международная подсудность, компетенция судов Республики Армения по делам с участием иностранных лиц, международная общая подсудность, международная подсудность по месту нахождения филиала и представительства юридического лица, редомициляция, международная подсудность по месту нахождения имущества.

Институт международной подсудности (компетенция судов по делам с участием иностранных лиц) играет исключительно важную роль в области правового регулирования международных частно-правовых отношений. В статье было проанализировано законодательство Республики Армения в контексте законодательства зарубежных стран, международно-правовых источников и научной литературы, в результате чего были выявлены некоторые правовые проблемы, и выдвинуты предложения по их решению. В частности, обсуждаются вопросы места жительства физических лиц и места нахождения юридических лиц в контексте международной подсудности, вопросы компетенции судов по месту нахождения филиала или представительства юридического лица, соотношения институтов редомициляции и международной подсудности, вопросы международной подсудности по месту нахождения имущества. В результате подробного исследования сделаны конкретные предложения по улучшению законодательства в данной области.

Эффективное решение обсуждаемых вопросов окажет свое влияние на совершенствование данного института в Республике Армения и развитие международного частного оборота.

SOME ISSUES OF THE JURISDICTION OF THE COURTS OF THE REPUBLIC OF ARMENIA OVER CASES INVOLVING FOREIGN PERSONS

Key words: international private law, international civil procedure, international jurisdiction, jurisdiction of the courts of the Republic of Armenia in cases involving foreign persons, general jurisdiction, jurisdiction connected with the location of the branch and representative of the legal entity, redomiclation, jurisdiction connected with the location of the property (in rem).

The jurisdiction of courts over cases involving foreign persons plays an extremely important role in the field of legal regulation of international private law relations. The article analyzes the legislation of the Republic of Armenia in the context of the legislation of foreign countries, international legal sources and legal literature, and as a result, several legal issues have been discussed, and proposals have been made for their solution. In particular, we have discussed the issues of the residence of natural persons and the location of legal persons in the context of jurisdiction, the issues of jurisdiction connected with the location of a branch or representative office of a legal entity, the relation between redomiclation and jurisdiction, issues of jurisdiction connected with the location of property. As a result of a detailed research, specific proposals have been made in order to improve the legislation in this area.

An effective solution to the discussed issues will have an impact on the improvement of this institution in the Republic of Armenia and the development of international private relations.